



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

10.06.2015թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 19/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Վեկար» ՍՊԸ-ի 22.05.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-19/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 27.05.2015թ. N 1911 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2015թ. թիվ 03/4-1/14538-15 գրությունը և ԳԲԽ-19/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 08.06.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Վեկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.05.2015թ. ներկայացրած բողոքով «Վեկար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից կազմակերպված «ՇՀԱՊԶԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով էլեկտրոնային ձևով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Փաստաթղթերի փաթեթում Ընկերությունը ներկայացրել է սահմանված ձևով հայտարարություն առ այն, որ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Այնուհետև՝ ի պատասխան պատվիրատուի հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանել է, որ

«Վեկար» ՍՊԸ-ն ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչի պատճառով էլ հանձնաժողովի կողմից 20.05.2015թ. կազմվել է թիվ 5 արձանագրությունը, որի համաձայն Ընկերության հայտը մերժվել է: Ընկերությունը նշել է, որ իրականում դա այդպես չէ, քանի որ հայտի ներկայացման օրվա՝ 07.05.2015թ. դրությամբ «Վեկար» ՍՊԸ-ն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչը հաստատվում է ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային մարմինների կողմից տրված համապատասխան 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքով:

Ըստ Ընկերության՝ հարկային մարմինների կողմից էլեկտրոնային տվյալների սխալ ներկայացման և զուտ տեխնիկական պատճառով Ընկերության ներկայացրած հայտն անհիմն ձևով մերժվել է: Այսպիսով, անհիմն ձևով կիրառվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 31-րդ հոդվածով, 45-րդ, 46-րդ և 48-րդ հոդվածների դրույթներով՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ համարել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից կազմակերպված «ՇՀԱՊԶԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 20.05.2015թ. թիվ 5 արձանագրությունը և նշված գնման ընթացակարգի արդյունքում որպես հաղթող ճանաչել «Վեկար» ՍՊԸ-ին:

Ընկերության ներկայացուցիչը, մասնակցելով 27.05.2015թ. ժամը 15:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին, ամբողջությամբ պնդել է Կենտրոնին 22.05.2015թ. ներկայացրած բողոքը և հայտնել, որ հայտը ներկայացնելու օրվա՝ 2015թ. մայիսի 7-ի դրությամբ, չի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ միաժամանակ որպես ապացույց ներկայացնելով ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային մարմնի կողմից 15.05.2015թ. տրված թիվ 2098 տեղեկանքը:

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.05.2015թ. N 1911 գրությամբ «Վեկար» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊԶԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վեկար» ՍՊԸ-ն:

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ ընթացակարգի քարտուղարը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային եղանակով հարցում է ուղարկել Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած՝ «Վեկար» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ: Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն այն մասին, որ Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների գումարի չափը կազմում է 696 471 ՀՀ դրամ:

Պատվիրատուն նշել է, որ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրությամբ «Վեկար» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Պատվիրատուի ներկայացուցիչը Կենտրոնում 27.05.2015թ. ժամը 15:00-ին նշանակված հանձնաժողովի նիստի ժամանակ հայտնել է, որ համաձայն Ընկերության կողմից ներկայացված ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային մարմնի 15.05.2015թ. տրված թիվ 2098 տեղեկանքի՝ «Վեկար» ՍՊԸ-ն չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորություններ, ինչի վերաբերյալ Պատվիրատուն կրկին անգամ հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, ի պատասխան որի ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ պետք է հիմք ընդունել ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած եզրակացությունը: Այնուհետև, Պատվիրատուն Ընկերության հայտը մերժել է:

3. ԳԲԽ-19/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 08.06.2015թ. եզրակացությունը և առաջարկել է մերժել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 20.05.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1-ին կետով «Վեկար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու և Ընկերությանն Ընթացակարգի հաղթող ճանաչելու պահանջների վերաբերյալ «Վեկար» ՍՊԸ-ի 22.05.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը:

4. ԳԲԽ-19/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-19/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վեկար» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.05.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարերի գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.05.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով որոշել է. հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ Նախարարություն) հարցում ուղարկել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Վեկար» ՍՊԸ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

4. Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 12.05.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Վեկար» ՍՊԸ-ի կողմից 2015թ. մայիսի 7-ի դրությամբ

(հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վեկար» ՍՊԸ-ն 2015թ. մայիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 696 471 ՀՀ դրամի չափով:

6. «Վեկար» ՍՊԸ-ն Պատվիրատուին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 2015թ. մայիսի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ տվյալ օրվա դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է 15 488 378 (տասնհինգ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար երեք հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամի չափով գերավճար:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.05.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է. հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած եզրակացությունը և «Վեկար» ՍՊԸ-ի ներկայացրած ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության կողմից տրամադրված 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքի անհամապատասխանությունը՝ Ընթացակարգը ժամանակավոր կասեցնել և հետագա ընթացքը լուծելու համար գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

8. Պատվիրատուն 15.05.2015թ. N 02/23.1/1743-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և հայտնել, որ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից «ամենագնաց մեքենա» ձեռք բերելու նպատակով 22.04.2015թ. կազմակերպված Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Վեկար» ՍՊԸ-ի կողմից 2015թ. մայիսի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը տրամադրել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ **ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 696 471 ՀՀ դրամի չափով:** Մինչդեռ, Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության կողմից տեղեկանք, համաձայն որի Ընկերությունը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

9. Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Նախարարությունը 19.05.2015թ. թիվ ՖՆ/1766-15 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ **պետք է հիմք ընդունել ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրամադրված եզրակացությունը:**

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.05.2015թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1-ին կետով որոշել է. հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած եզրակացությունը (ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասով)՝ «Վեկար» ՍՊԸ-ի հայտը մերժել:

11. Հաշվի առնելով «Վեկար» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրված եզրակացության և Մաշտոցի հարկային տեսչության 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքի միջև առկա հակասությունը՝ Կենտրոնը 03.06.2015թ. N 01/04.1/1208-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով սեղմ ժամկետում հայտնել, թե Ընկերությունը 07.05.2015թ. դրությամբ ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

12. Ի պատասխան Կենտրոնի 03.06.2015թ. N 01/04.1/1208-15 գրության՝ Նախարարությունը 08.06.2015թ. N 03/4-1/14538-15 գրությամբ հայտնել է, որ ի պատասխան Պատվիրատուի 12.05.2015թ. հարցմանը՝ ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրվել է եզրակացություն, որով Մաշտոցի ՀՏ-ում հաշվառված «Վեկար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, որի գումարը կազմել է 696 471 ՀՀ դրամ: ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ի կողմից «Վեկար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00082994) տեղեկանք տրամադրելու վերաբերյալ ներկայացված պարզաբանման համաձայն՝ Ընկերությունը **14.05.2015թ. դիմել է հարկային տեսչություն նվազագույն շահութահարկի (պայմանական գերավճարից) վճարումներից առաջացած գերավճարը շահութահարկի ապառքը մարելու համար:** Միևնույն ժամանակ 15.05.2015թ. Մաշտոցի հարկային տեսչության հարկ վճարողների սպասարկման կենտրոն է

ներկայացվել դիմում՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԳՆ «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն» տեղեկանք ներկայացնելու համար: ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ի կողմից 15.05.2015թ. տնտեսվարող սուբյեկտին տրամադրվել է տեղեկանք՝ **հաշվի առնելով հարկ վճարողի դիմումի համաձայն իրականացված հաշվանցումը:**

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով «Վեկար» Ապահովագրական ՍՊԸ-ի 08.06.2015թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենք 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա

ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝ հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ի պատասխան Պատվիրատուի 12.05.2015թ. հարցմանը՝ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, որի գումարը կազմել է 696 471 ՀՀ դրամ:

Ի պատասխան «Վեկար» ՍՊԸ-ի 14.05.2015թ. Մաշտոցի հարկային տեսչության հարկ վճարողների սպասարկման կենտրոն ներկայացրած դիմումի՝ Մաշտոցի հարկային տեսչության կողմից 15.05.2015թ. տրամադրվել է թիվ 2098 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 2015թ. մայիսի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ի պատասխան Պատվիրատուի 15.05.2015թ. N 02/23.1/1743-15 գրության՝ Նախարարությունը 19.05.2015թ. թիվ ՖՆ/1766-15 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ պետք է հիմք ընդունել ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրամադրված եզրակացությունը:

Ի պատասխան Կենտրոնի 03.06.2015թ. N 01/04.1/1208-15 գրության, որտեղ մատնանշվել է «Վեկար» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրված եզրակացության և Մաշտոցի հարկային տեսչության 15.05.2015թ. թիվ 2098 տեղեկանքի միջև առկա հակասությունը, Նախարարությունը 08.06.2015թ. N 03/4-1/14538-15 գրությամբ կրկին հայտնել է, որ «Վեկար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային

պարտավորություններ, որի գումարը կազմել է 696 471 ՀՀ դրամ: ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ի կողմից 15.05.2015թ. տրված և ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության եզրակացությանը հակասող թիվ 2098 տեղեկանքի կապակցությամբ, ՀՀ ֆինանսների նախարարությունը նույն գրությամբ պարզաբանել է, որ այն հետևանք է «Վեկար» ՍՊԸ-ի 14.05.2015թ. դիմումի հիման վրա իրականացված հաշվանցման:

Մասնավորապես, Ընկերությունը 14.05.2015թ. դիմել է հարկային տեսչություն նվազագույն շահութահարկի (պայմանական գերավճարից) վճարումներից առաջացած գերավճարը շահութահարկի ապառքը մարելու համար, իսկ դրանից հետո Ընկերության կողմից 15.05.2015թ. Մաշտոցի հարկային տեսչության հարկ վճարողների սպասարկման կենտրոն ներկայացվել է դիմում՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը տեղեկանք ներկայացնելու համար:

Այսպիսով, Վեկար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը՝ **2015թ. մայիսի 7-ին**, ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 696 471 ՀՀ դրամի չափով, իսկ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ի կողմից 15.05.2015թ. տրված և ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության եզրակացությանը չհամապատասխանող թիվ 2098 տեղեկանքը հետևանք է Ընկերության դիմումի համաձայն **14.05.2015թ.** իրականացված հաշվանցման, որը իրականացվել է «ՇՀԱՊԶԲ-15/21 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին «Վեկար» ՍՊԸ-ի կողմից հայտը **07.05.2015թ.** ներկայացնելուց հետո: Այդ իսկ պատճառով ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.05.2015թ. թիվ ՖՆ/1766-15 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ պետք է հիմք ընդունել ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից տրամադրված եզրակացությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Խարհուրդը գտնում է, որ Ընկերության բողոքն անհիմն է, քանի որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Բացի այդ, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, Ընկերությանն Ընթացակարգի հաղթող ճանաչելու որոշում կայացնելու լիազորություն չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վեկար» ՍՊԸ-ի 22.05.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Ենոքյան գոռ

Անդամներ՝



Խաչատրյան Գևորգ



Մնացականյան Արայիկ